

**INTERNATIONAL CONFERENCE  
“SOUTH CAUCASUS: CURRENT CHALLENGES TO STABILITY  
AND SECURITY” \***

*Gohar Iskandaryan*

**Keywords:** Caucasus, Iran, Turkey, Azerbaijan, Georgia, security.

On November 28, 2023, the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia (hereinafter NAS RA) organized an international conference entitled " South Caucasus: Current Challenges to Stability and Security" that took place in the meeting hall of the NAS RA.

The international conference was held within the framework of the topic “Transformation of the South Caucasus power balance and the Artsakh war of 2020: trends of regional developments under the new geopolitical realities” (code 21T-5F218) financed by the Higher Education and Science Committee of the Ministry of Education, Science, Culture and Sports. The group has been conducting research since 2021. As a culmination of their efforts, a collective monograph presenting the findings will be published in 2024.

The head of the thematic program is Gohar Iskandaryan (PhD, Associate Professor). The group consists of Alen Ghevondyan (PhD, Associate Professor), Menua Soghomyan (PhD, Associate Professor), Kristine

---

\* The article was submitted on December 11, 2023.

Melkonyan (PhD, Senior Researcher of the Department of Turkey of the Institute of Oriental Studies of NAS RA), and Liana Petrosyan (PhD, lecturer at the Chair of Iranian Studies of the Faculty of Oriental Studies of YSU).

Academician-secretary of the Division of Armenology and Social Sciences of NAS RA, Member of Academy Yuri Suvaryan welcomed the participants of the conference. "Changes are happening in the world now. A transition from a unipolar world to a multipolar world is taking place. These changes bring forth acute geopolitical tension, especially among major powers. Taking advantage of the busyness of major powers, some countries are trying to solve their problems. And perhaps that is one of the reasons that there is a security threat in the South Caucasus and this conference is going to address these issues", - Yuri Suvaryan said in his speech. He mentioned that the ambitions of Turkey and Azerbaijan regarding Armenia should also be deliberated in that logic. "Those countries have tasks that they planned a hundred years ago with the creation of the Azerbaijani state by Turkey. Today they are trying to achieve those pre-planned tasks. This thought should lead us to a remarkable idea: to have an independent state, one must also have a long-term political plan or strategy. Our academic conference has serious problems to discuss, as well as commitments to make them academically relevant and elaborate", - said Yuri Suvaryan.

Mohammad Asadi Mohaved, Advisor of the Culture Center of the Embassy of the Islamic Republic of Iran, welcomed the participants of the conference, specifically noting: "I hope that the outcome of this conference will support the stability and security of the region because we believe that such discussions among elites can be very effective. We have gathered here today to discuss the important issues of security and political stability, as well as the issues of economy, cultural development, and peace. It is known that the lack of security and stability brings many challenges for the society."

Deputy of the Mejlis of the Islamic Republic of Iran Robert Beglaryan noted: “After the collapse of the Soviet Union, the relations between Iran and Armenia have been positive and based on mutual trust, therefore both stable and developing. However, in the process of development, economy has always been inferior to politics, and a serious gap was noticed especially after the Second Karabakh (Artsakh) War. After the 44-day war, the relations between the two countries entered a new phase, which has and will continue to have a multilateral character, due to the alarming geopolitical turmoil. The presence and role of regional neighbors and countries outside the region have created and will create challenges. “The title of this conference has included the existence of challenges and, naturally, the conference will address them even if limited to a few”, - said Robert Beglaryan and added that such events are extremely important so that the state system and decision-making centers of both countries are aware of each other's views and concerns, and become acquainted with world perceptions and the style and formulation of policies. I would like to emphasize that, in my opinion, it is crucial for the Islamic Republic of Iran to understand what perspective Armenia sees for Iran-Armenia relations, how it perceives Iran's role in the security domain of the region, how the Republic of Armenia reacts to Iran's security policies and priorities in keeping the region peaceful”, - said Robert Beglaryan.

Gohar Iskandaryan, Head of the Department of Iran of the Institute of Oriental Studies of NAS RA, spoke on the topic “The New Developments taking place in the South Caucasus: A View from Armenia”.

Alibeman Eghbali Zarch, Director of Eurasian Studies of the Islamic Republic of Iran, delivered a speech on the topic “Geopolitical effects of the current developments in South Caucasus”.

Anna Ohanyan, professor of Stonehill College in Massachusetts, USA, presented a report entitled "A Supercontinent or a Sinkhole? The Promise and the Perils of Eurasian Continentalism for Word Order".

Karen Khanlari, MP of Iran's 9th and 10th Mejlis, professor of the Islamic Azad University, presented a report called "Geographic definitions of Armenia in Islamic sources".

YSU associate professor Alen Ghevondyan delivered the report "The Change in the Balance of Power in the South Caucasus and the Security Challenges of Armenia".

Kristine Melkonyan, senior researcher of the Department of Turkey of the Institute of Oriental Studies NAS RA, presented the report "Turkey's Commercial and Economic Relations with Russian Federation (2002-2020)".

YSU associate professor Menua Soghomonyan delivered the report "The Theoretical-Conceptual Basis of the Study of the Geopolitical Architecture and Dynamics of the South Caucasus".

Motahari Hosseyni, a researcher at Payam-e Noor University of the Islamic Republic of Iran, presented the report "The Historical Origins of the Armenian-Azerbaijani Conflicts over Karabakh".

In the second part of the event, associate professor from ASEU Suren Parsyan delivered a report called "The Development Problems of Armenia-Iran Trade and Economic Relations".

Yeghia Tashjian, Senior Research Assistant at the Issam Fares Institute for Public Policy and International Affairs at the American University of Beirut, made a presentation entitled "Russia, INSTC, Regional Trade Interconnectivity, and Armenia".

Liana Petrosyan, a lecturer at the Chair of Iranian Studies of the Faculty of Oriental Studies YSU, gave a speech on the topic "The Deepening of Armenia-Iran Cooperation after the 44-day War".

Garik Misakyan, a lecturer of the Faculty of Oriental Studies of YSU, spoke about the following topic: “The Tool for Spreading the Iranian "Axis of Resistance" Ideology: On the Example of the Republic of Azerbaijan”.

Director of the Armenia-Iran Cooperation Development Fund Pooya Hosseini presented the topic “The Role of the South Caucasus in Regional and International Developments and Competition”.

Zhanna Vardanyan, an analyst of the Orbeli Center, presented the last report of the day entitled “The position of the Turkic speakers of northwestern Iran in the Artsakh War of 2020”.

The work of the conference continued on November 29, which took place in the Department of Iran of the Institute of Oriental Studies of NAS RA. During the round table discussion, the participants summarized their studies and drew up a new working program, according to which the research group should develop scenarios of political developments and present them to the relevant bodies.

The international conference was organized by the Institute of Oriental Studies of NAS RA with the support of the Higher Education and Science Committee of the Ministry of Education, Science, Culture and Sports of the Republic of Armenia within the framework of code 21T-5F218.

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ «ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՎԿԱՍ.  
ԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ  
ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ»**

**Գոհար Իսկանդարյան**

**Քանալի բառեր՝** Կովկաս, Իրան, Թուրքիա, Ադրբեջան, Վրաստան, անվտանգություն:

2023 թ. նոյեմբերի 28-ին ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի նիստերի դահլիճում ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը կազմակերպել էր «Հարավային Կովկաս. կայունության և անվտանգության արդի մարտահրավերները» խորագրով միջազգային գիտաժողովը:

Միջազգային գիտաժողովն անցկացվեց «Հարավկովկասյան ուժային հարաբերակցության փոխակերպումը և արցախյան 2020 թ. պատերազմը. տարածաշրջանային զարգացումների միտումները աշխարհաքաղաքական նոր իրողությունների ներքո» (21T-5F218 ծածկագրով) թեմայի շրջանակում, ինչը ֆինանսավորվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի կողմից: Թեմատիկ խմբի անդամները երեք տարի շարունակ ուսումնասիրություններ են իրականացնելու և ծրագրի ավարտին՝ 2024 թ.,

տպագրելու են կոլեկտիվ մենագրություն, որում ամփոփված կլինեն ուսումնասիրության արդյունքները:

Թեմատիկ ծրագրի ղեկավարն է պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Գոհար Իսկանդարյանը, խմբի կազմում են ԵՊՀ դոցենտներ Ալեն Ղևոնդյանը, Մենուա Սողոմոնյանը, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի ավագ գիտաշխատող Քրիստինե Մելքոնյանը, ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս Լիանա Պետրոսյանը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս Յուրի Սուվարյանը: «Հիմա աշխարհում տեղի են ունենում փոփոխություններ: Միաբևեռ աշխարհից անցում է կատարվում բազմաբևեռ աշխարհի: Այս փոփոխությունները բերում են աշխարհաքաղաքական սուր լարվածություն հատկապես խոշոր տերությունների միջև: Օգտվելով խոշոր տերությունների զբաղվածությունից՝ որոշ երկրներ փորձում են լուծել իրենց խնդիրները: Եվ թերևս դա պատճառներից մեկն է, որ Հարավային Կովկասում իսկապես կա անվտանգության սպառնալիք, և այս գիտաժողովը պետք է անդրադառնա այս հարցերին», - իր ելույթում ասաց Յուրի Սուվարյանը: Նա նշեց, որ Հայաստանի վերաբերյալ Թուրքիայի և Ադրբեջանի նկրտումները նույնպես այդ տրամաբանության մեջ պետք է դիտարկել: «Այդ երկրներն ունեն խնդիրներ, որոնք ծրագրել են դեռ հարյուր տարի առաջ Թուրքիայի կողմից Ադրբեջան պետության ստեղծմամբ:

Ահա այսօր իրենց ծրագրով նախատեսված խնդիրները փորձում են լուծել: Այս միտքը պետք է մեզ մի ուշագրավ գաղափարի բերի՝ անկախ պետություն ունենալու համար պետք է ունենալ նաև երկարաժամկետ քաղաքական ծրագիր կամ ռազմավարություն: Մեր գիտաժողովն ունի լուրջ խնդիրներ քննարկելու, դրանք գիտական առումով կարևորելու և մշակելու հանձնարարականներ», - ասաց Յուրի Սուվարյանը:

Իրանի Իսլամական Հանրապետության դեսպանության մշակույթի կենտրոնի խորհրդական Մոհամմադ Ասադի Մոհավեդը, ողջունելով գիտաժողովի մասնակիցներին, մասնավորապես, նշեց. «Հույս ունեմ, որ այս գիտաժողովի արդյունքը կաջակցի տարածաշրջանի կայունությանը և անվտանգությանը, քանի որ մենք հավատում ենք, որ էլիտաների միջև նման քննարկումները կարող են լինել շատ արդյունավետ: Մենք այսօր այստեղ հավաքվել ենք քննարկելու անվտանգության և քաղաքական կայունության կարևոր հարցը, ինչպես նաև տնտեսության, մշակույթի զարգացման և խաղաղության հարցերը: Հայտնի է, որ անվտանգության և կայունության պակասը բերում են շատ մարտահրավերներ հասարակության համար»:

Իրանի Իսլամական Հանրապետության Մեջլիսի պատգամավոր Ռոբերտ Բեգլարյանը նշեց. «Խորհրդային Միության փլուզումից հետո Իրան և Հայաստան հարաբերությունները եղել են բարիդրացիական և փոխադարձորեն վստահված, ուստի և՛ կայուն, և՛ զարգացման միտում ունեցող: Սակայն այդ զարգացման գործընթացում միշտ էլ տնտեսականը զիջել է քաղաքականին,



ինչի լուրջ բացը նկատվեց հատկապես Ղարաբաղյան 2-րդ պատերազմից հետո: 44-օրյա պատերազմից հետո աշխարհաքաղաքական տագնապաբնույթ եռուզեռից ելնելով՝ երկու երկրների հարաբերությունները թևակոխեցին նոր փուլ, որն ունի և դեռ կունենա բազմակողմանի բնույթ: Տարածաշրջանի հարևանների և տարածաշրջանից դուրս երկրների ներկայությունն ու դերակատարությունը ստեղծել են և ստեղծելու են մարտահրավերներ: Այս գիտաժողովն իր վերնագրում ներառել է մարտահրավերների առկայությունը, բնականաբար, կանդրադառնա դրանց՝ թեկուզև սահմանափակվելով քանիսի վրա, - ասաց Ռոբերտ Բեգլարյանը և հավելեց, - նման միջոցառումները չափանշանը կարևոր են, որպեսզի երկու երկրների պետական համակարգն ու որոշում կայացնող կենտրոնները տեղյակ լինեն միմյանց հայացքներից և մտահոգություններից, ծանոթանան աշխարհընկալումներին և քաղաքականությունների մշակման ոճին ու ձևավորմանը: Պիտի ընդգծեմ, որ, ըստ իս, այս պահի դրությամբ Իրանի Իսլամական Հանրապետության համար շատ կարևոր է, որ ընկալի, թե Հայաստանը ինչ հեռանկար է տեսնում Իրան-Հայաստան հարաբերությունների համար, ինչպես է ընկալում Իրանի դերը տարածաշրջանի անվտանգային տիրույթում, Հայաստանի Հանրապետությունն ինչպես է արձագանքում Իրանի անվտանգության քաղաքականությանն ու առաջնահերթություններին տարածաշրջանը խաղաղ պահելու հարցում», - ասաց Ռոբերտ Բեգլարյանը:

Գոհար Իսկանդարյանը հանդես եկավ «Հարավային Կովկասում տեղի ունեցող նոր զարգացումները. հայացք Հայաստանից» թեմայի վերաբերյալ զեկուցմամբ:

Իրանի Իսլամական Հանրապետության Եվրասիա հետազոտությունների տնօրեն Ալիբեման Էդբալի Ջարչը հանդես եկավ «Հարավային Կովկասում ընթացող զարգացումների աշխարհաքաղաքական ազդեցությունները» թեմայով զեկուցմամբ: ԱՄՆ Մասաչուսեթսի Սթոնհիլլ քոլեջի պրոֆեսոր Աննա Օհանյանը ներկայացրեց «Գերմայրցամա՛ք, թե՛ խորխորատ. համաշխարհային կարգի եվրասիական կոնտինենտալիզմի հեռանկարներն ու վտանգները» զեկուցումը: «Հայաստանի աշխարհագրական բնորոշումներն իսլամական աղբյուրներում» զեկուցմամբ հանդես եկավ Իրանի 9-րդ, 10-րդ Մեջլիսի պատգամավոր, Իսլամական Ազատ Համալսարանի պրոֆեսոր Կարեն Խանլարին: ԵՊՀ դոցենտ Ալեն Ղևոնդյանը ներկայացրեց «Ուժային բալանսի փոփոխությունը Հարավային Կովկասում և ՀՀ անվտանգային մարտահրավերները» զեկուցումը: ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Թուրքիայի բաժնի ավագ գիտաշխատող Քրիստինե Մելքոնյանը ներկայացրեց «Թուրքիա-Ռուսաստան առևտրատնտեսական հարաբերությունները (2002-2020թթ.)» զեկուցումը: ԵՊՀ դոցենտ Մենուա Սողոմոնյանը ներկայացրեց «Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական ճարտարապետության և դինամիկայի ուսումնասիրության տեսական-հայեցակարգային հենքը» զեկուցումը: Իրանի Իսլամական Հանրապետության Փայամ Նոր համալսարանի գիտաշխատող Մոթահարի Հուսեյնին ներկա-

յացրեց «Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակամարտությունների պատմական ակունքները» զեկուցումը:

Միջոցառման երկրորդ մասում զեկույցներով հանդես եկան ՀՊՏՀ դոցենտ Սուրեն Պարսյանը. «Հայաստան-Իրան առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման հիմնախնդիրները» զեկույցով, Լիբանանի Բեյրութի Ամերիկյան համալսարանի գիտաշխատող Եղիա Թաշճյանը հանդես եկավ «Ռուսաստանը, Հյուսիս-Հարավ միջանցքը, տարածաշրջանային տնտեսական փոխկապակցվածությունը» զեկույցմամբ: Հաջորդիվ ելույթ ունեցավ ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի իրանագիտության ամբիոնի դասախոս Լիանա Պետրոսյանը «Հայաստան-Իրան փոխգործակցության խորացումը 44-օրյա պատերազմից հետո» թեմայով: ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի դասախոս Գարիկ Միսակյանն էլ հանդես եկավ «Իրանական «դիմադրության առանցք» գաղափարախոսության տարածման գործիքը. Ադրբեջանական Հանրապետության օրինակով» զեկույցմամբ: Նրան հաջորդեց Հայաստան-Իրան համագործակցության զարգացման հիմնադրամի տնօրեն Փույա Հոսեյնին «Հարավային Կովկասի դերը տարածաշրջանային և միջազգային զարգացումներում և մրցակցությունում» թեմայով: Վերջինը զեկույցով հանդես եկավ Օրբելի կենտրոնի վերլուծաբան Ժաննա Վարդանյանը «Իրանի հյուսիս-արևմուտքի թյուրքախոսների դիրքորոշումը 2020թ. Արցախյան պատերազմում» թեմայով:

Գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին նոյեմբերի 29-ին, որը տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստի-

տուտի Իրանի բաժնում: Կլոր սեղան քննարկման ժամանակ մասնակիցներն ամփոփեցին իրենց աշխատանքները և կազմեցին աշխատանքային նոր ծրագիրը, ըստ որի պետք է հետազոտող խումբը մշակի քաղաքական զարգացումների սցենարներ և դրանք ներկայացնեն պատկան մարմիններին:

Միջազգային գիտաժողովը կազմակերպվել է ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի կողմից ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի աջակցությամբ 21T-5F218 ծածկագրի շրջանակներում: